



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010. ք.Երևան. Հանրապետության հր.
Կառավարության փուն 3
Ֆաքս +374 060 62 17 34
www.mud.am
E-mail: info@mud.am

23.09.13թ N 04/13.1/5829-13

Ձեր N _____ ան _____

ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի,
Ֆուրմանովի 32
<Շիրակ կենտրոն> ՀԿ նախագահ
պարոն Վ.Թումասյանին

Հարգելի պարոն Թումասյան

Ձեր 2013 թվականի օգոստոսի 30-ի գրությամբ բարձրացված՝ Գյումրի քաղաքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) շրջանակներում լրացուցիչ կառուցվելիք բնակարանների շինարարական աշխատանքների ավարտման ժամկետների ձգձգման, 2012 թվականին բաշխված բնակարանների սեփականաշնորհման, դրանցում հայտնաբերված թերությունների վերացման հետ կապված հարցերի վերաբերյալ հայտնում եմ.

Կիսելով վերը նշված հարցերի շուրջ առկա մտահոգությունը, ՀՀ քաղաքաշինության նախարարի՝ 2013 թվականի սեպտեմբերի 10-ին ՀՀ Շիրակի մարզ կատարած այցելության ժամանակ դրանք քննարկվել են ծրագրի շրջանակներում կառուցապատումն իրականացնող «Գլենդել Հիլզ» ՓԲ ընկերության պատասխանատուների հետ համատեղ, որի արդյունքներով տրվել են համապատասխան հանձնարարականներ՝ լրացուցիչ կառուցվելիք շենքերի շինարարական աշխատանքներն արագացնելու, ինչպես նաև 2012 թվականին բաշխված բնակարաններում հայտնաբերված թերությունները կարճ ժամկետում վերացնելու վերաբերյալ:

Միաժամանակ, ելնելով քաղաքացիների անվտանգության լրացուցիչ միջոցառումների ապահովման անհրաժեշտությունից և բնակչության սոցիալական վիճակից՝ նախարարության կողմից «Գլենդել Հիլզ» ՓԲ ընկերության առջև խնդիր է դրվել բնակարաններում տեղադրված ծխատար համակարգերը փոխարինել ավելի երկարատև օգտագործման ծխատար համակարգերով: